

«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ  
վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Անգլերեն բանվոր խոսքի զարգացմանն ուղղված մեթոդներ և հնարներ  
Առարկա –անգլերեն

Դպրոց -Գյումրի, թիվ 4 հիմնական դպրոց

Վերապատրաստվող՝ Քրիստինե Սեդրակի Քաշանյան

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: Բանավոր հաղորդակցման ժամանակ առաջացող խնդիրները-----	5
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: Բանավոր խոսքի զարգացմանն ուղղված միջոցները -----	-8
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	14
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	15

## Ներածություն

Օտար լեզվի իմացությունը նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Այդ պատճառով էլ օտար լեզվի դասավանդումը հանրակրթական դպրոցներում խիստ կարևոր է: Ուստի հաշվի առնելով, որ օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջնակության փոխըմբռնմանը, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը և փոխանցմանը, միջնկարգ կրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակը, այն է՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները:

Բացի այդ նոր տեխնոլոգիական կարգերի ձևավորման և միջազգային հարաբերությունների զարգացման մեր ժամանակներում օտար լեզուների ուսումնասիրությունը դառնում է կրթության և ընդհանրապես կյանքի անբաժանելի մասը:

Սակայն այսօր դպրոցներում հենքը դրվում է քերականության և բառապաշարի ուսուցման վրա, (ինչը , այո, պետք է լինի հիմք, աստիճան) իսկ բանվոր խոսքը, հաղորդակցման կարողությունների ձևավորումը ինչ-ինչ պատճառներով մնում է ստվերում: Այսօր կարելի է խոսել դասավանդման նոր մեթոդաբանության՝ հաղորդակցական ներդրման մասին, որը ի հայտ եկավ 90-ականներին և այժմ արագորեն զրավում է բնագավառը: Այս մեթոդի առաջատար ուղղությունը հաղորդակցությունն է: Աշակերտները իրենց լեզվական կարողություններն ու հմտությունները կիրառում են իրական օտարալեզու հաղորդակցման իրավիճակներում: Նման հնարավորությունների շնորհիվ աշակերտները կարող են ազատորեն արտահայտել իրենց մտքերը օտար լեզվով՝ օգտագործելով դասարանում ավելի վաղ ձեռք բերած համապատասխան գիտելիքներն ու հմտությունները:

Տարածված է այն թյուր կարծիքը, որ օտար լեզվով հաղորդակցվելու համար բավական է տիրապետել լեզվի քերականությանը և ունենալ բավարար բառապաշար: Հենց այս սկզբունքով էլ հիմնականում ղեկարվարվում են անգլերեն լեզվի ուսուցիչները (ընդհանրապես օտար լեզվի), աշակերտներին ջանասիրաբար

բացատրելով քերականական կանոնները, սերտել տալով բացատրություններ, , անգիր տալով բառերի շարքեր որոնք մի քանիդասս հետո մոռացվում են: Սակայն ամենալավ աշակերտներն անգամ դժվարանում են պատասխանել օրվա դասի հետ առնչություն չունեցող ամենապարզ հարցերին. նրանք չունեն անգլերեն լեզվով բավարար *հաղորդակցական հմտություններ:*

Հաղորդակցվել նշանակում է ընկալել լսածը կամ ընթերցածը և տալ տրամաբանական պատասխան՝ գրավոր կամ բանավոր: Իսկ այդ ունակությունները ձեռք են բերվում հատուկ մշակված նպատակային վարժությունների շնորհիվ:

Հայ աշակերտների համար առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում բանավոր հաղորդակցվելը : Պատճառները կարող են բազմաթիվ լինել: Փորձենք ենք վեր հանել դրանցի մի քանիսը.

- դպրոցներում գրեթե անտեսվում են լսողական ունակության ընկալմանն ուղղված վարժությունները, իսկ բանավոր խոսքի զարգացման համար վարժությունները հիմնականում սահմանփակվում են հինականում պարզունակ փոխակերպական վարժանքներով և ընթերցված տեքստի վերաբերյալ հարց ու պատասխանով
- իրական խոսքային գործունեությունը տեղի ունենում հանպատրաստից. խոսողը չունի երկար մտածելու , խոսքը ձևակերպելու հնարավորություն
- բանավոր և գրավոր խոսքն ունեն իրենց բնորոշ քերականական և բառապաշարային առանձնահատկություններ , որոնց աշակերտները սովորաբար ծանոթ չեն
- բանավոր հաղորդակցվելիս հայ աշակերտների համար ամենակարևոր խոչընդոտը կարող է լինել նրա հոգեբանական բարդույթը՝ սխալվելու և ընկերների ծիծաղին արժանանալու վախը: Այդ պատճառով ինչ-որ բան ասելուց առաջ նրան մտահոգում է ոչ թե ինչ ասելու ,այլ ինչպես ասելու խնդիրը:

## Գլուխ առաջին: Բանավոր հաղորդակցման ժամանակ առաջացող խնդիրները

Հաղորդակցումը տեղեկատվության փոխանցումն է մարդուց մարդ՝ բազմաշերտ գործընթաց, որը ենթադրում է մարդկային խմբերի միջև շփման զարգացում: Հաղորդակցման խնդիրներին առնչվում են մարդկային գործունեության տարբեր բնագավառների մասնագետներ, դրանով իսկ պայմանավորված հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ու կենսակական խնդիրների թվին: Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ, հույզեր և այլն: Ինչպես ժամանակին ճշմարտացիորեն արտահայտվել է Ջոն Ռոքֆելերը. «Մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսիք են շաքարն ու սուրճը: Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելին, քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար»: Ընդգծեք, որ վերջին տարիներին, մանավանդ գործատուները, նախապատվություն են տալիս այն աշխատողներին, ովքեր բացի մասնագիտական գիտելիքներից ու կարողություններից, տիրապետում են նաև հաղորդակցման հմտություններին:

Հաղորդակցումը հիմնականում լինում է բանավոր (ունկնդրել, խոսել), գրավոր (գրել կարդալ) և լեզվական միջնորդություն( թարգմանություն) :

Նորարարական տեխնոլոգիաներով համալրված այս դարում օտար լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում ուսուցիչներին: Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն: Մեթոդաբանական գրականության մեջ տարբերակվում են լեզվուսուցման երեք առանցքային մոտեցումներ՝ *կառուցվածքային* (լեզուն դիտարկվում է որպես քերականական տարրերի կապակցման համակարգ), *գործառական* (լեզուն դիտարկվում է որպես որոշակի գործառույթների արտահայտման և իրականացման գործիք) և *ինտերակտիվ* (լեզուն դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման միջոց):

Ելնելով լեզվուսուցման վերոհիշյալ մոտեցումներից՝ իսպանագիտական աղբյուրներում սովորաբար տարբերակում են երեք հիմնական մեթոդ՝ *քերականական* (método gramatical), *հաղորդակցական* (método comunicativo) և *հանրական* (método comunitario): Ներկայումս ավելի մեծ հեղինակություն են վայելում նորարարական տեխնոլոգիաների հիման վրա ձևավորված *համացանցային աղբյուրները*, որոնք նույնպես օտար լեզուների ուսուցման արդյունավետ միջոց են:

*Քերականական մեթոդը* դասավանդման ավանդական մեթոդ է, որն ի հայտ է եկել 18-րդ դարի վերջերին և վերջնականապես ձևավորվել 20-րդ դարի սկզբներին՝ ստանալով քերականական թարգմանության մեթոդ անվանումը: Միացյալ Նահանգներում այն հայտնի է նաև Պրուսյան մեթոդ անվամբ: Երկար ժամանակ այն միակ ընդունելի մեթոդն էր: Այս ավանդական մեթոդի հիմքում միայն տեքստերի ընթերցումն ու թարգմանությունն են՝ շեշտը դնելով բառուսուցման, ուղղագրության և քերականության վրա՝ առանց գործնական կիրառության: Ներկայումս այն ձևավորվել է և վերանվանվել բառաքերականական մեթոդ, որն արդեն հիմնվում է կարդալու, լսելու և բանավոր ու գրավոր խոսքի վրա: Այն կիրառվում է տարբեր դպրոցներում:

*Հաղորդակցական մեթոդն* ի հայտ է եկել 20-րդ դարի 60-ական թվականներին: Այս մեթոդի նպատակն աշակերտների հաղորդակցական հմտությունները զարգացնելն է, որպեսզի նրանք կարողանան կոնկրետ հաղորդակցական իրավիճակում կատարել լեզվական միջոցների ճշգրիտ ընտրություն, ինչպես նաև տարբերակեն խոսքային ոճերի և տեքստերի տեսակները: Դպրոցներում երբեմն հիմնվում են նաև այս մեթոդի վրա, որում բացակայում են թարգմանական վարժությունները: Հաղորդակցական մեթոդը հազեցած է գործնական առաջադրանքներով, ոչ ադապտացված տեքստերով և տեսալսողական նյութերով: Այս մեթոդը հիմնականում բնութագրվում է որպես ընդհանուր ուսուցման մոտեցում և ոչ թե որպես հստակ որոշված դասավանդման մեթոդ: Մեթոդը ենթադրում է օտար լեզվի ուսուցում՝ հիմնված ոչ թե զուտ քերականական կառույցների, այլ բանավոր խոսքի և հաղորդակցության վրա, որոնց շնորհիվ աշակերտը կտիրապետի նաև տվյալ քերականական կառույցներին: Հաղորդակցական մեթոդի հիմքում ընկած են դերախաղը, հարցազրույցները, ուսանողների շրջանում տեղեկատվության փոխանակումը, տարատեսակ խաղերը, հարցումները, զույգերով աշխատանքը և այլն, որոնք զարգացնում են ուսանողների՝

ճշգրիտ քերականական կառույցներ կազմելու ու դրանք օգտագործելու ունակությունները և կատարելագործում են նրանց արտասանությունը:

Այնուամենայնիվ հարկ է փաստել, որ ինչպես քերականական, այնպես էլ հաղորդակցական մեթոդը կատարյալ չէ: Այդ իսկ պատճառով ստեղծվեց *հանրական մեթոդը*, որը եկավ լրացնելու և համադրելու այս երկու մեթոդները՝ հանդես գալով որպես դրանց ավելի ամբողջական ու կատարյալ տեսակ: Քանի որ ն՛ բանավոր, ն՛ գրավոր խոսքը հավասարապես կարևոր են լեզուն կատարյալ տիրապետելու համար, հանրական մեթոդը լեզվի ուսուցումը հավասարապես բաշխեց այդ երկուսի միջև: Այն խթանում է ուսուցչի և աշակերտի փոխհամագործակցությունը դասարանում, օտար լեզվի ուսուցումը համարում է կոլեկտիվ ձեռքբերում՝ հիմնված ոչ թե մրցակցության, այլ համագործակցության վրա: Չարգացնում է ստեղծագործական միտքը և այլ անձանց հետ հաղորդակցվելու ունակությունները: Դասընթացի ընթացքում քննվում են քերականությունը, բառապաշարը և հնչյունաբանությունը:

Հաղորդակցական ժամանակակից մեթոդը օտար լեզուների դասավանդման բազմաթիվ մեթոդների ներդաշնակ համադրություն է՝ լինելով, հավանաբար, տարբեր կրթական մեթոդների էվոյուցիոն բուրգի վերնում:

Օտար լեզուների դասավանդման ներկա փուլում լեզվաբան ուսուցիչների մեծ մասը «հաղորդակցականը» համարում է ամենաարդյունավետը և քննադատում ավանդական մեթոդները, որոնք գործում են «քերականությունից բառապաշար, այնուհետև անցում դեպի համախմբման» սկզբունքով: Արհեստականորեն ստեղծված վարժությունները լեզվի օգտագործող չեն ձևավորում, և այն մարդը, ով սովորում է լեզու այս մեթոդով, ավելի հավանական է, որ լռի, քան սխալ արտահայտություն արտասանի: Իսկ «հաղորդակցականությունը», ընդհակառակը, նպատակ ունի «բացել» լեզուն:

Հաղորդակցական մոտեցումը զարգացնում է բոլոր լեզվական հմտությունները՝ խոսելուց և գրելուց մինչև կարդալ և լսել: Քերականությունը յուրացվում է լեզվով հաղորդակցվելու գործընթացում. ուսանողը նախ անգիր է անում բառերը, արտահայտությունները, լեզվական բանաձևերը և միայն դրանից հետո սկսում հասկանալ, թե դրանք ինչ են քերականական իմաստով: Նպատակը աշակերտին սովորեցնել օտար լեզվով խոսել ոչ միայն սահուն, այլև ճիշտ:

Նոր բառերի կանոններն ու իմաստները ուսուցիչը բացատրում է աշակերտին ծանոթ բառապաշարի, քերականական կառուցվածքների և արտահայտությունների, ժեստերի և դեմքի արտահայտությունների, գծագրերի և այլ տեսողական միջոցների օգնությամբ: Կարող են օգտագործվել նաև սկավառակներով համակարգիչներ, ինտերնետ, հեռուստահաղորդումներ, թերթեր, ամսագրեր և այլն: Այս ամենը նպաստում է աշակերտների հետաքրքրության արթնացմանը ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, մշակույթի, ավանդույթների նկատմամբ:

Օտար լեզուների դասերին ուսուցիչը ստեղծում է իրավիճակներ, երբ աշակերտները շփվում են գույգերով, խմբերով: Դա ավելի բազմազան է դարձնում դասը: Աշխատելով խմբում՝ ուսանողները ցույց են տալիս խոսքային անկախություն: Նրանք կարող են օգնել միմյանց, հաջողությամբ շտկել գրուցակիցների պնդումները:

Դասարանում ուսուցիչը ստանձնում է հաղորդակցության կազմակերպչի գործառույթները, տալիս է առաջատար հարցեր, ուշադրություն հրավիրում մասնակիցների բնօրինակ կարծիքների վրա, հանդես է գալիս որպես արբիտր վիճելի հարցերի քննարկման ժամանակ:

Հաղորդակցականության տարբերությունն այն է, որ ակտիվ բառապաշարին և ուսումնասիրված քերականությանը հատուկ հարմարեցված տեքստեր և երկխոսություններ դասավանդելու փոխարեն որպես հիմնական տեխնիկա օգտագործվում է իրական կյանքի իրավիճակների իմիտացիա, որոնք հնչում են դասարանում այնպես, որ սովորողների մոտ առաջացնեն խոսելու առավելագույն մոտիվացիա: Այսպիսով, դասագրքից տիպիկ արտահայտություններ անվերջ ծամելու փոխարեն. «Իմ անունը Արամ է. Ես ապրում եմ Գյուրիում: Ես աշակերտ եմ» և այլն, «Ծանոթություն» թեման ուսումնասիրող աշակերտներն իրականում սկսում են ակտիվորեն ծանոթանալ և քննարկել իրենց հետաքրքրող հարցերը:

Նրանք հիմնականում քննարկում են թեմաներ, որոնց աշակերտները լավ ծանոթ են իրենց մայրենի լեզվից. դա թույլ է տալիս կենտրոնանալ հատկապես հաղորդակցման հմտությունների զարգացման վրա, այսինքն՝ լեզուն ինքնաբերաբար օգտագործելու ունակության վրա: Նախընտրելի է, որ թեմաները լինեն «այրվող» կապված կա՛մ աշակերտների կյանքի հետ, կա՛մ ժամանակակից կյանքի բոլոր այն ասպեկտների հետ, որոնք հետաքրքրում են բոլորին (Էկոլոգիա, քաղաքականություն, երաժշտություն,



կրթություն և այլն): Արևմտյան դասագրքերում, հատկապես Upper Intermediate-ից ցածր մակարդակներում, դժվար թե գտնեք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Շեքսպիրի կենսագրությունը կամ միջուկային ֆիզիկայի ձեռքբերումները: Միայն բարձր մակարդակներում են ներդրվում «գրքային» և «գիտական» ոճերը:

Ի տարբերություն աուդիոլեզվային և այլ մեթոդների, որոնք հիմնված են կրկնության և անգիրի վրա, հաղորդակցական մեթոդը վարժություններ է սահմանում «բաց վերջաբանով». աշակերտներն իրենք չգիտեն, թե ինչ արդյունք կտա դասարանում իրենց գործունեությունը, ամեն ինչ կախված կլինի արձագանքներից և պատասխաններից: Ամեն օր օգտագործվում են նոր իրավիճակներ: Ահա թե ինչպես է պահպանվում աշակերտների հետաքրքրությունը դասերի նկատմամբ. չէ՞ որ բոլորն ուզում են բովանդակալից շփվել բովանդակալից թեմաների շուրջ:

Դասարանում ժամանակի մեծ մասը խոսվում է (չնայած ուշադրություն է դարձվում նաև կարդալուն և գրելուն): Միևնույն ժամանակ ուսուցիչները քիչ են խոսում և ավելի շատ լսում՝ ուղղորդելով միայն աշակերտների գործունեությունները: Ուսուցիչը կատարում է վարժությունը, այնուհետև, «խոսելով» ուսանողների հետ, ընկնում է հետին պլան և հանդես է գալիս որպես դիտորդ և արբիտր: Նախընտրելի է, որ նա օգտագործի բացառապես ուսումնասիրվող լեզուն:

### **Գլուխ երկրորդ: Բանավոր խոսքի զարգացմանն ուղղված որոշ միջոցներ**

Անհրաժեշտ է խթանել դասարանում աշակերտների բանավոր հաղորդակցումը: Կարևոր է որ աշակերտները ներգրավված լինեն իրական ակտիվ հաղորդակցության՝ զրույցի մեջ: Նրանք պետք է իրար հետ հաղորդակցվեու ,իրար տեղեկություն հաղորդելով կամ հարցերի միջոցով տեղեկություն ստանալու անհրաժեշտություն զգան: Ինչպես որ կարդալ սովորում են կարդալով, այնպես էլ՝ խոսել սովորում են խոսելով:

Աշակերտների միջև հաղորդակցությունն ապահովում են զույգային/ խմբային աշխատանքների միջոցով, սահմանափակելով ուսուցչի խոսքին հասկցվող ժամանակը: Դրա համար անհրաժեշտ է նրանց սովորեցնել զրույց սկսել և ավարտելու, ինչպես նաև հրավեր , շնորհավորանք, բողոք, կարծիք, և այլն արտահայտելու և դրանց պատասխանելու ընդունված ձևերը:

Հայաստանի հանրակրթական դպրոցների անգլերեն լեզվի դասագրքերում կան տարատեսակ վարժություններ, որոնք միտված են բանավոր խոսքի զարգացմանը: ՀՀ ԿԳՆ-ը անգլերեն լեզվի առարկայական ծրագրերում և չափորոշիչներում առաջարկում է մեծ թվով առաջադրանքներ՝ ուղղված խոսքի զարգացմանը, ինչպես օրինակ՝ նկարագրություն, համադրում, համակում, ճանակար , ձևագունդ, բանավեճ , դերախաղ և այլն , որոնցից յուրաքանչյուր ուսուցիչ կարող է ընտրել դասարանի մակարդակին և թեմային համապատասխան առաջադրանք:

Այլ խնդիր , թե ինչ ինչպես խթանել աշակերտների՝ դասարանում խոսելու կարողությունները: Եթե աշակերտները դժվարությամբ են խոսում դասարանում, նրանք խոսել սովորելու քիչ հնարավորություն ունեն, ավելին, նրանց պասիվության պատճառով մյուս աշակերտներն էլ են զրկվում հաղորդակցվելու և խոսելու հնարավորությունից:

Երկչոտ երեխաներին քաջալերելու տարբեր միջոցներ են առաջարկվում, ստորև փորձենք ներկայացնել մի քանիսը. Նախ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական կարողությունները, հետաքրքրություններն ու պահանջմունքները: Դասարանում բոլոր աշակերտները չունեն նույն ընդունակությունները, հմտություններն ու գիտելիքները, հետևաբար աշխատանքը

կարելի է կազմակերպել այնպես, որ ամեն մեկը ստանա իր գիտելիքներին և հետաքրքրություններին համապատասխան առաջադրանք:

1. Հնարավորինս հեշտացնել առաջադրանքը: Եթե աշակերտը բավականաչա գիտելիքներ չունի առաջադրանքը լավ կատարելու համար, բնականաբար նա չի ցանկանա կատարել այն: Այդ խնդիրը կարելի է լուծել հետևյալ կերպ.

- աշակերտներին ավելի երկար ժամանակ տալ պատրաստվելու համար;
- առաջադրանքը համապատասխանեցնել աշակերտի ունեցած կենսափորձի, որպեսզի նրանք կարողանան օգտագործել իրենց ֆոնային գիտելիքները տվյալ բնգավառում;
- աշակերտներին հնարավորություն տլ համատեղ կատարել որոշ առաջադրանքներ: Խմբային աշխատանքի դեպքում յուրաքանչյուր աշակերտի տալ հստակ առաջադրանք կամ դեր, առանց որի ամբողջական առաջադրանքը չի կատարվի;

3. Անհրաժեշտ է աշակերտների մոտ ձևավորել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, որպեսզի նրանք առավել հաճույքով ու ակտիվորեն մասնակեն աշխատանքին:

4. Որպեսզի աշակերտները ավելի ազատ ու անկաշկանդ խոսեն դասարանում, անհրաժեշտ է.

- փոխել աշակերտների բացասական վերաբերմունքը սխալների նկատմամբ, վերացնել սխալ թույլ տալու վախը: Անհրաժեշտ է նրանց հետ քննարկել օտար լեզվով խոսելու կարևորությունը, բացատրել, թե որն է առաջնային՝ սահունությունն ու ճշգրտությունը, թե՞ իմաստի ճիշտ հաղորդումը: Երբ նրանց հաջողվի ճիշտ հաղորդել անհրաժեշտ իմաստը, նրանք աստիճանաբար ավելի քիչ կկենտրոնանան սղալների և ավելի շատ՝ իմաստի վրա: Իհարկե ուսուցիչն էլ պետք է հիշի, որ բանավոր հաղորդակցության ընթացքում չի կարելի ընդհատել աշակերտին և ուղղել նրա թույլ տված սխալը: Անհրաժեշտության դեքում սխալներին կարելի է անդրադառնալ ավելի ուշ:

- պետք է աշակերտներին ինքնավստահություն ներշնչել:Դրա համար պետք է նրանց հնարավորություն տալ հաջողությամբ կատարել առաջադրանքները: Դա դժվար չէ անել, եթե առաջադրանքը սկզբում ունենա պրզ, հասանելի նպատակներ և աստիճանաբար բարդանա: Կարելի է առաջադրանքը բաժանել մասերի և յուրաքանչյուր էտապ հաղթահարելիս քաջալերել աշակերտին : Այդ դեպքում , եթե նույնիսկ առաջադրանքը ամբողջությամբ չի կատարվում, աշակերտները գոհունակություն են զգում թեկուզ մի մասը կատարելու համար:
- պետք է պարզել, թե ինչն է աշակերտին անհանգստացնումկամ վախեցնում, ինչն է նրանց դժկամության պատճառը , և փորձել միասին հաղթահարել դա:
  5. Անհրաժեշտ է դասարանում ստեղծել փոխօգնության, միմյանց օժանդակելու մթնոլորտ: Եթե աշակերտը զգա , որ ուսուցիչն ու դասընկերները պատրաստ են օգնել իրեն , նա աելի սիրով ու անկաշկանդ կխոսի: Այդ նպատակի համար կարելի է.
- թույլ տալ , որ աշակերտներն իրար օգնեն : Կարելի է թույլ տալ , որ խոսելուց առաջ նրանք իրենց պատասխանները ստուգեն կամ քննարկեն ընկերների հետ, որպեսզի ավելի վստահ ելույթ ունենան համադասարանցիների առջև:
- աշակերտներին մերի բաժանելիս պետք է հաշվի առնել նրանց մտերմությունը, խառնվածքը, քանի որ նրանք մտերիմ ընկերների հետ ավելի հեշտ ու անկաշկանդ են շփվում: Կարելի է թույլ տալ, որ աշակերտներն իրենք ընտրեն , թե ում հետ են ուզում աշխատել:
- երբեմն կարելի է թույլ տալ մայրենի լեզվի գործածությունը, չբարկանալ, այլ նրբանկատորեն օգնել նրան՝ վերադառնալ անգլերենին:
- պետք է խուսափել այն իրավիճակներից , որոնց դեպքում աշակերտները խուճապի են մատնվում՝ անդադար սխալներ ուղղելը, աշակերտին դաս հարցնելը, որովհետև նա լուռ է, կամ շեղվել է դասից, առանց նախապատրաստվելու համար ժամանակ տալու՝ աշակերտից պատասխան պահանջել և այլն:Այսպիսի դեպքերում աշակերտից պատասխան լսելու փոխարեն միայն կարելի է նրա դեմքին վախեցած արտահայտություն տեսնել, որը կհասցնի դասարանում բացասական և լարված մթնոլորտի:

## Եզրակացություն

Օտար լեզուն նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրան ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Օտար լեզուներն ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում են հաղորդակցական և հանրամշակութային կարողությունների ձևավորմանա:

Մի քանի օտար լեզուների իմացությունը, այսինքն բազմալեզվությունը, հասարակության համար ապահովում է արագ ինտեգրումը համաշխարհային հանրության քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական տարածքում , հնարավորություն տալիս անհատին ապահովել արագ և արդունավետ ինտեգրումը հասարակության մեջ, ինչպես նաև մեծացնում է ազատ տեղաշարժման իրավութից օգտվելու գործնական հնարավորությունները: Ասել է թե օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունը օգնում է աշակերտին հաջողության հասել ոչ միայն ուսման մեջ, այլև հետագայում՝ կյանքի և աշխատանքային տարբեր իրադրություններում: Ուստի անհրաժեշտ է մեծ պատասխանատվությամբ վերաբերվել բանավոր խոսքի դասավանդմանը և աշակերտների համար ստեղծել կենդանի, աշխույժ գրույցի տրամադրող իրավիճակներ, որոնք կապահովեն ակտիվ և հետաքրքիր դաս: Որպեսզի աշակերտներն առավելագույն օգուտ ստանան

դասից և ավելի ազատ հաղորդակցվեն միմյանց հետ , անհրաժեշտ է նրանց մեջ սերմանել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, նվազագույնի հասցնել նրանց վախերն ու բարդությունը, և ամեն կերպ քաջալերել աշակերտների միջև հաղորդակցությունը:

## Օգտագործված գրականության ցանկ

<< Անգլերեն լեզու>> հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր

<<Օտար լեզուները Հայաստանում>> գիտամեթոդական հանդես

<<Խոսք և Հաղորդակցություն>> Գայանե Թերզյան, Կարինե Թորոսյան: Երևան Լույս հրատարակչություն, 2016:

.Oxford, R.L. (1990) Language Learning Strategies: What Every Teacher Should Know.